ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 / Հեռ. 055 40 30 18, էլ. փոստ Info_yeghegnadzor@aarhus.am, narekbeg@yahoo.com

Ե-11/14

16 սեպտեմբեր

ՀՀ էներգետիկայի ու բնական պաշարների նախարար

Երվանդ Զախարյանին

Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող

Նարեկ Բեգլարյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Զախարյան.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանի բարձրացումը՝ խնդրում եմ Ձեզ Եղեգնաձորի Օրհուս կենտրոնին տրամադրել մանրամասն տեղեկատվություն հետևյալի մասին.

Տրամադրել՝

- Ազատեկի ոսկու բազմատեղային հանքավայրի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով «Վայք Գոլդ» ՍՊԸ-ին տրամադրված թիվ ՇԱԹ-29/371 թույլտվության կրկնօրինակը,
- 23.11.2012 թվականին «Վայք Գոլդ» ՍՊԸ-ի հետ կնքված ընդերքօգտագործման թիվ Պ-371 պայմանագրի և տրամադրված լեռնահատկացման ակտի կրկնօրինակները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող Նարեկ Բեգլարյան